

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Լուսայի» անցեալ համարում լայտնել էինք, որ լոյս տեսաւ գաղարած հայկական «Նոր-Դար» լրագրի առաջին համարը և մի օրում սպառուեցաւ հինգ հազար օրինակ. այդ արդէն ապացոյց էր, թէ որ աստիճան ընթերցող հասարակութիւնը զգում էր մի օրինաւոր թերթի պահանջ, որ յագեցնել անկարող էր վերջին տարիների մամուլը։ Այժմ «Նոր-Դարը» սկսել է լոյս տեսնել կանոնաւոր կերպով և ընդարձակուած—մայրաքաղաքների մեծ թերթերի չափսով։ «Նոր-Դարի» հետ միաժամանակ սկսաւ կանոնաւոր կերպով լոյս տեսնել և պ. Գ. Մելիք-Ղարագիօղեանի «Արշալոյս» ամենօրեայ թերթը նոյնպէս մեծ ծաւալով և հետաքրքրական բովանդակութեամբ։ Մենք ողջունում ենք այդ երկու թերթերի հրապարակ գալը, ցանկալով կատարեալ յաջողութիւն։

Երկար ժամանակ մի խումբ մարդիկ իրանց օրգան թերթով աշխարհ էին թնդացնում ընտրական սկզբունքների և հասարակաց շահերի պաշտպանութեան խնդրով։ Ծնտրական սկզբունքը խախտուեցաւ, ժողովրդի իրաւոնքները ոտնատակ եղան, պէտք է ընտրական սկզբունքը գործադրել լայն ծաւալով ևն ևն, աղաղակում էին նոքա, երբ ձեռնտու էր իրանց, երբ այդ բանից չէր տուժում կուսակցական շահերը։ Օ տեղորաց, ժամանակները փոխուել են. քամին ուրիշ տեղից է փչում. այժմ ամեն մի խմբակ իրան իրաւունք է համարում հասարակաց անունից խօսել, ժողովրդի անունից դատել և... կարգադրութիւններ անել, ներկայացնելով մի մի ինքնակոչ յանձնաժողով կամ մասնաժողով, յանձնախումբ կամ մասնախումբ։ Ականջդ կանչի Պարոնեան։ Յիշեցէք վերջին եօթն ամիսների ընթացքում կազմուած մասնաժողովների գոյութեան պատմութիւնը։ Այդ տեսակ յանձնաժողովներից մէկի—դպրոցական յանձնաժողովի մասին խօսելով վերանորոգուած «Նոր-Դարը» իւր Յ համարում, մի իմաստալից և նշանակալից յօդուածում ասում է.